

զիկէ է կամ հերձուածող. եթէ կաթողիկէ է եւ հետեւաբար կը ճանչնայ Մայրազոյն Քահանայապետին իշխանութեան տարողութիւնը, պիտի գիտնայ նաեւ՝ թէ ան ամբողջ աշխարհն ունի իբրեւ թեմ եւ թէ անոր գերագոյն իշխանութիւնը սահմանափակուած չէ մասնաւոր երկրի մը սահմաններուն մէջ, մինչդեռ միւս բոլոր վիճակաւորներուն իրաւասութիւնը սահմանափակուած է իրենց թեմին կամ նահանգին մէջ, որմէ դուրս ոչինչ կրնան ընել, եւ հետեւաբար Պատրիարքին իշխանութիւնը սահմանափակուած ըլլալով Պատրիարքական Նահանգին մէջ, չէր կրնար միջամուխ ըլլալ Լէոպոլսոյ Արքեպիսկոպոսութեան: Իսկ եթէ Պատրիարքը հերձուածող է, եւս աւելի չի կրնար միջամուխ ըլլալ, քանի որ չի կրնար ռեւէ իշխանութիւն բանեցընել կաթողիկէ ժողովուրդին վրայ, նոյն իսկ եթէ սա իր նահանգին մէջ գտնուի» (27):

Փոխ-գիւանապետը չի պատասխաներ. Առաքելական Նուիրակը անոր լուծեանէն օգտուելով դարձեալ կը պնդէ որ Վարդանովիչ հեռացուի Լեհաստանէն: Թագաւորն ի վերջոյ տեղի կու տայ, եւ Վարդանովիչ Եպիսկոպոսին կ'իմացնէ՝ թէ բան մը պէտք չէ անկնկալէ իրմէ: Իսկ Փոխ-Գիւանապետը կը համոզէ Վարդանովիչը որ Հոռոմ երթայ եւ Սրբազան Քահանայապետին ներկայացնէ իր աղերսագիրը: Այս լուծումը հաճոյ կ'անցնի Նուիրակին, սակայն մեծ դժգոհութիւն